

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

17.11.2017

Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի բոլոր անդամները.

### ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական և կուրսային աշխատանքների կատարման ընթացքի ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
2. Առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/
3. «Պատմության և հասարակագիտության» ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատությունը հրատարակության երաշխավորելու հարցը: /Զեկուցող՝ Ա. Ներսիսյան/

### ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ ֆակուլտետի դեկան Ա. Ներսիսյանը ներկայացրեց կուրսային և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը: Նա նշեց, որ ֆակուլտետի դասախոսների կողմից ամբիոններ են ներկայացվել կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները, որոնք քննարկվել են ամբիոնների նիստերի ժամանակ: Հանձնարարվել են այն թեմաները, որոնք արդիական են, ունեն հետազոտության համար անհրաժեշտ համակազմ, առկա է տվյալ թեմայի վերաբերյալ տեսական գրականություն: Ամբիոնների կողմից ներկայացվել են դեկավարների խորհրդատվության օրերի գրաֆիկ, ինչպես նաև ամբիոններում ստեղծվել են ավարտական և կուրսային աշխատանքների ընթացքի մասին գրառումների մատյաններ: Ուսանողներին ժամանակին տրվել են անհրաժեշտ գրականության ցանկը, ներկայացվել աշխատանքի կառուցվածքը: Զեկուցողը նշեց նաև, որ որոշ ուսանողների մոտ ծագել են խնդիրներ և դժվարություններ, որոնք հնարավոր միջոցներով շտկվել և վերացվել են:

Պատմություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 19 ուսանող: Ուսանողների մեծ մասը ժամանակին հայթայթել է անհրաժեշտ

գրականությունը, ճշտել աշխատանքի կառուցվածքը և այժմ շարադրանքի փուլում է: Կան ուսանողներ, որոնց աշխատանքի կատարման ընթացքը անբավարար է, նրանց հետ պետք է տարվի անհատական օգնության աշխատանք:

Պատմություն մասնագիտության 3-րդ կուրսի 17 ուսանող տարվա ընթացքում գրելու է կուրսային աշխատանք: Աշխատանքները գտնվում են նախնական փուլում:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտությունից ավարտական աշխատանք է գրում 6 ուսանող՝ հայ գրականություն առարկայից: Աշխատանքների մեծ մասը նախնական փուլում է: Առաջին կիսամյակում նշված կուրսը ունի նաև կուրսային աշխատանք: Հայոց լեզվի կուրսային աշխատանքի թեմաներ է տրվել 3-րդ կուրսի 15 ուսանողների: Երկու կուրսերում էլ ուսանողների ճնշող մասը կատարել է աշխատանքի 80%-ը:

Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսի 10 ուսանող գրում է ավարտական, իսկ Հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսի 11 ուսանող՝ կուրսային աշխատանք:

Ավարտական աշխատանքի թեմաները բավականին հաջող են ընտրված և արդիական են: Դրանք գերազանցապես ունեն էքսպերիմենտալ բնույթ: Ուսանողների մեծագույն մասը հասցրել է որոշակի չափով կատարել տեսական գրականության վերլուծություն և շարադրում: Ինչպես նաև կատարել են հետազոտական մեթոդների հավաքագրում, համակազմի ընտրություն, արդյունքների քանակական վերլուծություն: Այդ ամենը գտնվում են նախնական վերլուծությունների և եզրակացությունների շարադրման փուլում:

Առաջին կիսամյակում արտասահմանյան գրականություն առարկայից կուրսային աշխատանք են գրում Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի 17, իսկ Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի 14 ուսանող: Մասնագիտական լեզվից կուրսային աշխատանք է գրում Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի 27 և Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի 5 ուսանող: Նշված մասնագիտությունների ուսանողները կատարել են ավարտական աշխատանքների 40, իսկ կուրսային աշխատանքների 80%-ը:

Մասնակի բացառություններով ավարտական աշխատանքների կատարման ընթացքը բավարար է: Անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում ունենալ այն

ուսանողներին, ովքեր դեռևս բավարար աշխատանք չեն կատարել, հանդիպել նրանց գիտական ղեկավարներին, հարկ եղած դեպքում այս գործում ներգրավել նաև ամբիոնի այլ դասախոսներին:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

*Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Բ.գ.թ., ասիստենտ Վ. Աղաբաբյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, Բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը:*

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*Ամբիոնային հաշվետվությունները կուրսային և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ համարել բավարար:*

### ***ԼՄԵՑԻՆ.***

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի ղեկան Ա. Ներսիսյանը: Զեկուցողը ներկայացրեց 2017-18 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքները: Նա նշեց, որ քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն ու ստուգումները իրականացվել են ժամանակացույցի համաձայն: Ֆակուլտետի դասախոսները նկատելիորեն կատարելագործել են թեստերը: Ուսանողների կողմից հարցաշարերի հետ կապված խնդիրները լուծվել են ժամանակին և տարաձայնություններ չեն եղել: Առաջին անգամ ֆակուլտետի առաջին և չորրորդ կուրսերում ընթացիկ քննություններն ու ստուգումներն իրականացվել են հանձնաժողովներով:

Ֆակուլտետում առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների արդյունքում արձանագրված ակադեմիական պատկերը եղել է հետևյալը.

Պատմություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.90 և 6.45 միավոր: Պատմություն մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Հայոց պատմություն-1 առարկայից՝ 4.00, իսկ ամենացածրը՝ Նորագույն պատմություն

առարկայից՝ 1.37: Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է Պատմության դասավանդման մեթոդիկա՝ 8.37 և Հայաստանի պատմական աշխարհագրություն առարկայից՝ 8.33, իսկ ամենացածրը՝ Վրաստանի և Ադրբեջանի պատմություն առարկայից՝ 4.84:

Հայոց լեզու և գրականություն մասնագիտության 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.78 և 7.41 միավոր: Պետք է նշել, որ Հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է 19-20-րդ դդ արտասահմանյան գրականության պատմություն առարկաներից՝ 4.20, իսկ ամենացածրը՝ Հայ ժողովրդի բանահյուսություն առարկայից՝ 3.40:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է Ժամանակակից հայերենի կետադրություն առարկայից՝ 8.73, իսկ ամենացածրը՝ Գրաբար-3 առարկայից՝ 5.86:

Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրերի ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.15 և 6.78 միավոր: Պետք է նշել, որ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա կրթական ծրագրերի ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Երաժշտություն և տարրական դպրոցում երաժշտության ուսուցում առարկաներից՝ 4.19, իսկ ամենացածրը՝ Ընդհանուր հոգեբանություն առարկայից՝ 2.37:

Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է 1-ին բուժօգնություն և երեխայի առողջության պահպանման հիմունքներ առարկայից՝ 9, իսկ ամենացածրը՝ Մաթեմատիկա –B առարկայից՝ 4.60:

Հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.97 և 5.91 միավոր: Ընթացիկ քննություններից ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Հոգեդիագնոստիկա առարկայից՝ 3.27, իսկ ամենացածրը՝ Տարիքային հոգեբանություն առարկայից՝ 2.64 միավոր: Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Մանկավարժական հոգեբանություն առարկայից՝ 6.91, իսկ ամենացածրը՝ Տրամաբանություն առարկայից՝ 4.91 միավոր:

Մասնավարժություն և հոգեբանություն մասնագիտության 4-րդ կուրսում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.80 և 9.25 միավոր: Այստեղ պետք է նշել, որ այս մասնագիտությամբ ընթացիկ քննությունների ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Ժամանակակից հոգեբանության հիմնահարցեր առարկայից՝ 3.90, իսկ ամենացածրը՝ Բժշկական հոգեբանություն առարկայից՝ 3.60: Ընթացիկ ստուգման պարագայում ամենաբարձր միջին գնահատականը արձանագրվել է Անալիտիկ հոգեբանություն առարկայից, իսկ ամենացածրը՝ Կառավարման հոգեբանություն առարկայից՝ 8.70:

Օտար լեզու և գրականություն մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.17 և 6.83 միավոր: Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Անգլերեն-1 առարկայից՝ 3.88, իսկ ամենացածր միջին գնահատականը արձանագրվել է Անգլերեն-3 առարկայից՝ 3.00:

Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր գնահատական արձանագրվել է Լատիներեն առարկայից՝ 9.25, իսկ ամենացածրը՝ 2-րդ առարկայից՝ 4.00:

Անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.70 և 6.49 միավոր: Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Անգլերեն-7 առարկայից՝ 3.35: Ամենացածր միջին գնահատականը արձանագրվել է 2-րդ մասնագիտական օտար լեզու /Ֆր/- 5 առարկայից՝ 2.35:

Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր գնահատական արձանագրվել է Օտար լեզվի դասավանդման տեսություն և մեթոդներ առարկայից՝ 7.35, իսկ ամենացածրը Արտասահմանյան գրականություն-4 առարկայից՝ 5.93:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ և 4-րդ կուրսերում ընթացիկ քննություններից և ստուգումներից միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 2.68 և 6.63 միավոր: Ընթացիկ քննության ամենաբարձր միջին գնահատական արձանագրվել է Ֆրանսերեն-7 առարկայից՝ 2.93: Ամենացածր միջին գնահատականը՝ 2.20, արձանագրվել է 2-րդ մասնագիտական օտար լեզու /անգլ/առարկայից:

Ընթացիկ ստուգումներից ամենաբարձր գնահատական արձանագրվել է Արտասահմանյան գրականություն-4 առարկայից՝ 7.30, իսկ ամենացածր 5.50 միավոր՝ Արտասահմանյան գրականություն-6 առարկայից:

2017-2018 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքներով ֆակուլտետի միջին գնահատականը կազմել է համապատասխանաբար 3.17 և 6.83 միավոր:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Բ.գ.թ. Ք. Հարությունյանը, Բ.գ.թ. Ա. Սարհատյանը:

### ***ՈՐՈՇԵՑԻՆ.***

*- Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի 1-ին միջանկյալ քննությունների ընթացքը համարել բավարար:*

### **ԼՄԵՑԻՆ.**

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Ա. Ներսիսյանը ներկայացրեց «Պատմության և հասարակագիտության» ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Ա. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատությունը հրատարակության երաշխավորելու հարցը: Նա նշեց, որ այն նպատակաուղղված է խորացնելու և ամրապնդելու ուսանողների, դասախոսների և հայագետների մոտ կիլիկյան շրջանի հայ եկեղեցու պատմության առավել կարևոր դրվագները և իրադարձությունները, ինչպես նաև ցույց տալու Հռոմկլայի և Սսի կաթողիկոսությունների կառավարման ժամանակաշրջանում հայկական մշակույթի ձեռքբերումները:

Աշխատությունը կօգնի ուսանողներին ընդլայնելու աշխարհայացքը ունիթորների և հակաունիթորների պայքարի մասին:

Նշվեց, որ աշխատությունը գրախոսվել է պ.գ.դ. Վ. Տեր-Ղևոնդյանի, պ.գ.թ. Դ. Թինոյանի, պ.գ.թ. Լ. Մկրտումյանի կողմից:

## **ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

Պ.գ.թ., դոցենտ Ս. Առաքելյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., ասիստենտ Ն. Գրիգորյանը, պ.գ.թ., ասիստենտ Ա. Հովհաննիսյանը: Արտահայտվողները առաջարկեցին երաշխավորել Ա. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատությունը և հանձնել տպագրության:

## **ՈՐՈՇԵՑԻՆ.**

Միջնորդել մասնաճյուղի գիտխորհրդին Ա. Հովհաննիսյանի «Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում» աշխատությունը երաշխավորելու հրատարակության:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Ներսիսյան

Վ. Աղաբաբյան